

Դեկտեմբերի 1-ը ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն է

30 տարի առաջ իր գոյության մասին ազդարարած ՁԻԱՅ-ն այսօր դարձել է մարդկության զարգացմանը խոչընդոտող հազարամյակի մարտահրավեր, իսկ ՄԻԱՎ վարակի համաճարակը ստացել է պանդեմիայի բնույթ, որից չի խուսափել աշխարհի և ոչ մի պետություն: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի խնդիրն արդիական է նաև մեր հանրապետության համար: 1988թ. մինչև 2011թ. դեկտեմբերի 1-ը ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1136 և ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդների մահվան 260 դեպք: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 2500:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հիմնախնդիրներին լայն հասարակության ուշադրությունը հրավիրելու հարցում կարևոր նշանակություն ունի 1988թ.-ից ի վեր ողջ աշխարհում դեկտեմբերի 1-ին նշվող ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրը: ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համաշխարհային օրը առիթ է մեկ անգամ ևս խոսելու ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հիմնախնդիրների, մեր երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ուղղությամբ տարվող աշխատանքների, ձեռքբերումների և առկա խնդիրների մասին:

Բազմաթիվ երկրների, նաև Հայաստանի փորձը ցույց է տալիս, որ նպատակաուղղված, համալիր միջոցառումների շնորհիվ հնարավոր է դիմակայել համաճարակին: Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի առաջին դեպքի արձանագրումից հետո անցած ավելի քան քսան տարիների ընթացքում հանրապետությունում հսկայական փորձ է կուտակվել ՄԻԱՎ վարակի դեմ պայքարի բնագավառում: Մեր երկրում իրականացվում են լայնածավալ աշխատանքներ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին արդյունավետ հակազդելու, համաճարակի հետևանքները մեղմելու ուղղությամբ: Այս առումով կարևոր քայլ էր 2007թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման ազգային ծրագիրը 2007-2011թթ. համար, որի գործողության ժամկետն ավարտվում է այս տարի: Արդեն իսկ միջազգային խորհրդատուների կողմից կատարվել են ծրագրի կարևորագույն բաղադրիչների գնահատումներ, որոնք արձանագրել են զգալի առաջընթաց երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին հակազդման գործում:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ազգային ծրագրի շրջանակներում հանրապետությունում իրականացվում են կանխարգելիչ ծրագրեր ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի և երիտասարդության շրջանում, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով ապրող մարդկանց տրամադրվում է բուժում, խնամք և աջակցություն, իրականացվում է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, տրամադրվում է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն, ստեղծվում են բժշկական օգնության տրամադրման և լաբորատոր ենթակառուցվածքներ, ապահովվում է դոնորական արան անվտանգությունը, կատարվում են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ախտորոշմանն ուղղված լաբորատոր հետազոտություններ և այլն: Արդյունքում բարելավվել են ՄԻԱՎ վարակի ախտորոշումն ու հայտնաբերումը, ՄԻԱՎ վարակի և համավարակների կառավարումը, հիվանդների դիսպանսերային հսկողությունը:

Ընդհանրապես ՄԻԱՎ վարակին արդյունավետ հակազդումը ենթադրում է համալիր միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝ կանխարգելում, բուժում, խնամք և աջակցություն:

Կանխարգելման էությունը բնակչության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը, հիվանդության նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորումն ու վարքագծի փոփոխումն է: Տեղեկատվական-կրթական աշխատանքները պետք է նպատակաուղղվեն նրան, որ յուրաքանչյուր մարդ իմանա ՄԻԱՎ վարակի վտանգի, վիրուսի փոխանցման ուղիների և վարակումից խուսափելու միջոցների մասին: ՄԻԱՎ վարակի տարածումը կանխելու համար բնակչության տարբեր խմբերում անցկացվում են նպատակաուղղված տեղեկատվական-կրթական աշխատանքներ՝ հաշվի առնելով այդ խմբերին բնորոշ վարքագծային այն առանձնահատկությունները, որոնք նպաստում են ՄԻԱՎ-ով վարակմանը:

ՄԻԱՎ վարակի կանխարգելումը բարդ խնդիր է, որի լուծման համար բավարար չէ միայն անվտանգ վարքագծի ձևավորմանը, վնասակար սովորույթներից հրաժարվելուն ուղղված ծրագրերի իրականացումը: Այս խնդիրը պետք է դիտարկել նաև սոցիալական տեսանկյունից: Անհրաժեշտ է պայքարել սոցիալական արմատներ ունեցող այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են

աղքատությունը, գործազրկությունը, մարմնավաճառությունը, թմրամոլությունը, նաև շարունակ բարելավել բուժսպասարկման որակը:

Թեև ՄԻԱՎ վարակի համաճարակը դեռևս շարունակում է ամեն տարի միլիոնավոր մարդկային կյանքեր խլել, այնուհանդերձ այսօր իրավիճակը փոքր ինչ փոխվել է այն առումով, որ շնորհիվ հառետրովիրուսային (ՀՌՎ) բուժման ՄԻԱՎ վարակն այլևս անբուժելի փոխարեն համարվում է երկարատև ընթացքով քրոնիկ հիվանդություն: Բուժման շնորհիվ հնարավոր է կառավարել ՄԻԱՎ վարակի զարգացման ընթացքը, երկարաձգել ՄԻԱՎ-ով ապրողների կյանքն ու բարելավել դրա որակը: ՀՌՎ բուժման շնորհիվ այսօր այլևս չի նշվում ՄԻԱՎ վարակով հիվանդի կյանքի վերին սահման: Բուժման, խնամքի և աջակցության համընդհանուր հասանելիության պայմաններում կարելի է արդյունավետորեն դիմակայել ՁԻԱՀ-ին և զգալիորեն նվազեցնել դրանից մահացությունը: Մի շարք հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ՀՌՎ բուժման ներդրման շնորհիվ տնտեսվում են հսկայական միջոցներ, որոնք պետք է ծախսվեին ՄԻԱՎ վարակով հիվանդների հիվանդանոցային խնամքի համար: Դրանից զատ, ՀՌՎ բուժումը նվազեցնելով հիվանդացությունը, կրճատում է ՄԻԱՎ վարակով հիվանդների հոսպիտալացումների թիվը՝ նպաստելով նրանց ակտիվ կենսակերպ վարելուն: Հարկ է նշել, որ գոյություն ունի սերտ կապ բուժման հասանելիության և կանխարգելման միջև: Որքան մատչելի և հասանելի լինի ՀՌՎ բուժումը, այնքան ավելի շատ մարդիկ կդիմեն կամավոր խորհրդատվության և հետազոտության ծառայություններ՝ ՄԻԱՎ-ի նկատմամբ իրենց կարգավիճակը ճշտելու համար: Դա էլ իր հերթին հնարավորություն կտա բացահայտելու համաճարակի իրական տարածվածությունը, պլանավորելու և ակտիվացնելու կանխարգելիչ աշխատանքները: Մյուս կողմից, արդեն իսկ հաստատված է, որ ՀՌՎ բուժման ֆոնին էապես նվազում է ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը: Առկա տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ ՀՌՎ բուժման շնորհիվ ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թիվն աշխարհում այսօր 30-50%-ով ավելի քիչ է, քան կարող էր լինել այդ բուժման բացակայության դեպքում: Քանի որ ՀՌՎ բուժման արդյունքում վիրուսային ծանրաբեռնվածությունը, այսինքն՝ արյան մեջ շրջանառող վիրուսների քանակը նվազում է մինչև չհայտնաբերվող մակարդակ, զգալիորեն նվազում է զուգընկերոջը ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը: Համաձայն վերջին հետազոտությունների, ՀՌՎ բուժումը կարող է 96%-ով կանխարգելել զուգերի շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցումը, այսինքն բուժումն ունի նաև անմիջական կանխարգելիչ նշանակություն:

Սկսած 2005թ.-ից ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդներին անվճար տրամադրվում է հակառետրովիրուսային բուժում, որը հասանելի է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով բոլոր հիվանդներին, որոնք ունեն բուժման ցուցում և տվել են իրենց համաձայնությունը: 2011թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ այդպիսի բուժում ստանում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով 322 հիվանդ, այդ թվում 11 երեխա: Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, այդ թվում կանխարգելիչ ՀՌՎ բուժում, տրամադրվում է ՄԻԱՎ վարակ խտրորոշում ունեցող բոլոր հղի կանանց և նրանցից ծնված երեխաներին, որոնք ապահովվում են նաև կաթնախառնուրդներով: Շնորհիվ իրականացված համալիր միջոցառումների, 2007թ.-ից ի վեր, ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված երեխաների շրջանում, որոնք ստացել են մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում, ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի արձանագրվել: Ձեռքբերումների թվում կարելի է նշել նաև այն, որ 2001թ.-ից ի վեր դոնորական արյան միջոցով հանրապետությունում ՄԻԱՎ-ով վարակման որևէ դեպք չի արձանագրվել: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն նաև մեթոդական օգնություն և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում հանրապետության բուժկանխարգելիչ հիմնարկներին, պետական կառավարման այլ մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում իրականացվող ծրագրերին:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տրամադրվում է նաև խնամք և աջակցություն՝ «Հավասարը հավասարին» խորհրդատվություն, փոխօգնության խմբերի կազմակերպում, հոգեբանական և սոցիալական աջակցություն, հովվական խնամք և աջակցություն:

Խարանի և խտրականության դեմ պայքարը ՄԻԱՎ վարակի համաճարակի հետագա ծավալումը կասեցնելու կարևոր նախապայմաններից է: Այս երևույթի դեմ արդյունավետ

պայքարելու համար, նախևառաջ պետք է իմանալ այն ծնող պատճառների մասին: Դրանցից են ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների մասին մարդկանց իրազեկության ոչ բավարար մակարդակը և ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վերաբերյալ հասարակության մեջ շրջանառվող թյուր պատկերացումները՝ համաձայն որոնց բոլոր ՄԻԱՎ-ով վարակվածները պատկանում են հասարակության կողմից ի սկզբանե մերժված խմբերին՝ թմրամոլներ, մարմնավաճառներ, հոմոսեքսուալ տղամարդիկ, իսկ ՄԻԱՎ-ով վարակվածությունը դիտվում է որպես անբարոյական վարքագծի անխուսափելի հետևանք և նույնականացվում է անմաքրության հետ: Խարանն ու խտրականությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է համախմբել հասարակության բոլոր շերտերին, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հարցերով հասարակության իրազեկումն իրականացնել բարոյական և հոգևոր արժեքների գնահատման ու ձևավորման համատեքստում: Այս առումով անգնահատելի է եկեղեցու, մտավորականության, արվեստի և մշակույթի գործիչների դերը: Պետք է հստակ իմանալ, որ ՄԻԱՎ-ը չի փոխանցվում կենցաղային շփումների ժամանակ՝ ձեռքսեղմման, համբույրի, գրկախառնվելու միջոցով, հեռախոսից, համակարգչից օգտվելիս, հագուստի և սպիտակեղենի միջոցով, հասարակական գուգարանից օգտվելիս, ջրի, սննդի, հագի, փռշտոցի, մոծակի կծելու միջոցով: ՄԻԱՎ-ով վարակվել հնարավոր է միայն սեռական ճանապարհով՝ առանց պահպանակի սեռական հարաբերությունների ժամանակ, վարակված արյան միջոցով՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման, չախտագրծված բժշկական պարագաների օգտագործման ժամանակ, ՄԻԱՎ վարակ ունեցող մորից՝ հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ և կրծքով կերակրվելիս: Չվարակվելու համար պետք է սովորել անհրաժեշտության դեպքում ցուցաբերել ժուժկալություն, հավատարիմ լինել զուգրնկերոջը, խուսափել պատահական սեռական կապերից, իսկ դրա անհնարինության դեպքում մշտապես օգտագործել պահպանակ, չօգտագործել թմրամիջոցներ, օգտագործել միայն միանվագ օգտագործման ներարկիչներ և ասեղներ: ՄԻԱՎ-ով վարակման վտանգ պարունակող վարքագծի ցանկացած դրսևորման դեպքում հարկավոր է անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու կարիք ունեն նաև նրանք, որոնք երբևէ ունեցել են որևէ սեռավարակ, վիրուսային հեպատիտ B կամ C: Կան մի շարք կլինիկական վիճակներ, որոնց դեպքում ևս ցուցված է անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն: Դրա համար պետք է դիմել ՁԻԱՅ-ի ԿՅԿ (ք.Երևան, Ավան, Աճառյան 2): ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը շատ ժամանակ չի պահանջում, ուղեկցվում է նախա- և հետթեստային խորհրդատվությամբ, անվճար է, հետազոտվողի ցանկությամբ կարող է կատարվել անանուն: Հետազոտության արդյունքները գաղտնի են և առանց հետազոտվողի թույլտվության չեն կարող տրամադրվել այլ անձանց:

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն կարելի է ստանալ նաև «Թեժ գծի» միջոցով: ՁԻԱՅ-ին առնչվող հարցեր կամ խորհրդի կարիք ունեցող յուրաքանչյուր մարդ կարող է զանգահարել 61-08-20 հեռախոսահամարով, առանց ներկայանալու դիմել իրեն հուզող հարցով և ստանալ համապատասխան տեղեկություններ ու խորհրդատվություն:

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի արմատական բուժում, նաև պատվաստանյութ այս հիվանդության դեմ դեռևս չկա: Պայքարի գլխավոր ուղղությունը շարունակում է մնալ կանխարգելումը: Յուրաքանչյուր ոք կարող է իր ներդրումն ունենալ այդ պայքարում՝ դրսևորելով պատասխանատու վարքագիծ, դիմակայելով խարանին և խտրականությանը, հարստացնելով ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքները, պարզելով ՄԻԱՎ-ի նկատմամբ սեփական կարգավիճակը:

ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն

Թեժ գիծ՝ 61-08-20